

վուրդն ըստ երեւութին քիչ մը հանդարտեցաւ. սակայն քիչ ետքը դարձեալ ընդդէմ ելան Կոլոտի: Յակոբ Ա. Նալեան յեկեղեցւոջ խօսեցաւ անօգուտ: Կ. Պոլսոյ մէջ այն ատեն Կեսարացիներն ուրիշներէ աւելի յոխորտ, ահարկու եւ ազդու էին. Սարգիս ասոնց մեծամեծները խուցը հրաւիրեց, եւ զիրենք շահեցաւ, եւ անոնց ձեռօք ռամիկն համոզեց ետ կենալ այս ստահակութենէն, քանի որ իշխանք եւ Սարգիս Առաջնորդն այսպէս պատշաճ կը համարին: Այնուհետեւ Սարգիս միաբանեցաւ անոնց հետ, որ յաջորդ Կիրակին Գում Գափուռի Ս. Աստուածածնի եկեղեցին քարոզ խօսի, եւ ազգին այս վիճակին վրայ ողբալու ատեն, իրենք ալ լան, եւ ապա զըջացեալ պահանջն, որ իրենց Պատրիարքը Յովհաննէս Կոլոտն է, եւ Բիւթիւրը կը մերժեն: Այսպէս կը կատարուի եւ Կոլոտ փառօք կը վերահաստատուի:

5.

Սարգիս 1738ին Կեսարիոյ Աթոռէն կը հրատարի: Պահատուրեան Պետրոս Ա., Ումիտ օղլու Սիմոն Եպիսկոպոս ի Գաղատիա կաթողիկեայ կ'ըլլան: Կիւլապ օղլու Եղիա Ա.: Գաղատացի կաթողիկեայք չորս եկեղեցիներու կը տիրեն: Սարգիս 1738-1740 Առաջնորդ Գաղատիոյ, իր ընթացքը: Աւգերեան Ստեփ. Եպ. ի եւ Տէրզի Շիրին օղլու Մովսէս կաթողիկեայ եպիսկոպոսներու կնիսագրութիւնը, տապանագիրը, եւ Գաղատիոյ կաթողիկեայք: Վրթամէս Ա., Տէր Սուրբաս, Մայմոն օղլու Պետրոս Ա., Պիպլեմնի օղլու Մովսէս Ա., Ալանվերտի օղլու Յովհաննէս Ա., Ումիտ օղլու Տէր Սահակ, Կարապետ Ա. կաթողիկեայք: Զիւթիւր Պետր. Ա. ի Գաղատիա: Մէհտէր օղլու Գէորգ Ա.: Սարգիս Գաղա-